ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԱՆՁԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-965-20.11.2024-ԱՌՀ-011/0) ԵՒ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-965[1]-20.11.2024-ԱՌՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	***ՀՀ կառավարություն***	**«Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված**	Նախագծում 2-րդ հոդվածի 2-րդ կետով՝ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «8) ամփոփագիր՝ ներկայացված բժշկական փաստաթղթերի, Կառավարության որոշմամբ սահմանված ինքնագնահատման հարցաշարիև այլ տեղեկատվության հիման վրա մշակված անձի ֆունկցիոնալության նկարագիր»:	Ընդունվել է:	Ընդունվել է:

			Այս փոփոխությունը նպատակը իրավական ճկունության ապահովումն է և պայմանավորված է այն հանգամանքով, որ ամփոփագիր մշակելու հիմք հանդիսացող փաստաթղերը սահմանվում են ենթաօրենսդրական իրավական ակտով՝ ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի N 1180-Ն որոշմամբ:		
2.	***ՀՀ կառավարություն***	**Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված**	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով՝ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր 10-րդ մասում՝ «Միասնական սոցիալական ծառայության» բառերը փոխարինել «անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում իրավասու պետական մարմին» բառերով: Այս փոփոխությունը պայմանավարված է այն հանգամանքով որ Օրենքում օգտագործվում է «անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում իրավասու պետական մարմին» ձևակերպումը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	***ՀՀ կառավարություն***	**Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ**	Նախագծի 5-րդ հոդվածով օրենքի 7-րդ հոդվածում լրացվող նոր՝ 5.2-րդ մասը շարադրել հետևյալ	Ընդունվել է:	Ընդունվել է:

		կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդված	խմբագրությամբ՝ «5.2 Անձի ֆունկցիոնալության գնահատման դիմումը մուտքագրվում է էլեկտրոնային համակարգ անձի կամ նրա օրինական ներկայացուցիչ կողմից, իսկ դիմումին ներկայացվող պահանջների ստուգումն ու ամփոփագրի մշակումն իրականացնում է անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում իրավասու պետական մարմինը:»: Փոփոխությունը նպատակ ունի հստակեցնել, որ անձի ֆունկցիոնալության գնահատման դիմումը մուտքագրվում է էլեկտրոնային եղանղակով:		
4.	***ՀՀ կառավարություն***	**Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդված**	Նախագծի 7-րդ հոդվածով՝ օրենքում լրացվող 11.1-ին հոդվածի 2-րդ մասից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
5.	***ՀՀ կառավարություն***	**Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդված**	Նախագծի 7-րդ հոդվածով օրենքում լրացվող նոր՝ 11.1-ին հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետում «ֆիզիկական անձի» բառից հետո լրացնել «կամ նրա օրինական ներկայացուցչի» բառերը: Նախագծում կատարված լրացումը պայմանավորված է «Անձի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետիով «*Անձի ֆունկցիոնալության գնահատումն իրականացվում է՝ անձի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա.*»:		
6.	***ՀՀ կառավարություն***	**Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդված**	Նախագծի 7-րդ հոդվածով օրենքում լրացվող նոր՝ 11.1-ին հոդվածի 7-րդ մասում և 11-րդ մասի 4-րդ կետից հանել «(անձանց)» բառը: Այս կապակցությամբ նշենք, որ փոփոխությունը պայմանավորված է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասով՝ «*Եթե նորմատիվ իրավական ակտում բառը նշված է եզակի թվով, ապա դա տարածվում է նաև այդ բառի հոգնակիի վրա և ընդհակառակը*»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
7.	***ՀՀ կառավարություն***	**Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդված**	Նախագծի 7-րդ հոդվածով օրենքում լրացվող նոր՝ 11.1-ին հոդվածի 10-րդ մասում՝ 1) հանել «փաստաթղթեր,» բառերը, 2) «փաստաթղթեր, կրկնօրինակներ, լուսապատճեններ, իրեր, փորձանմուշներ» բառերը փոխարինել «իրեր» բառով: Փոփոխությունը պամանավորված է	Ընդունվել է:	Ընդունվել է:

			այն հանգամանքով, որ անձի ֆունկցիոնալության գնահատման վարույթն իրականացվում է էլեկտրոնային համակարգի միջոցով, որին Տեսչական մարմինը ունենալու է հասանելիություն: Ուստի փաստաթղթեր վերցնելու անհրաժեշտությունը վերանում է:		
8.	***ՀՀ կառավարություն***	**Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդված**	Նախագծի 7-րդ հոդվածով օրենքում լրացվող նոր՝ 11.1-ին հոդվածի 18-րդ մասում «վարչական պատասխանատվությունը կիրառվում է օրենքով սահմանված կարգով» բառերը փոխարինել «կիրառվում են օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ» բառերով: Առաջարկվող կարգավորման նպատակը բովանդակության հստակությունն ապահովելն է:	Ընդունվել է:	Ընդունվել է:
9.	***ՀՀ կառավարություն***	**Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդված**	Նախագծի 7-րդ հոդվածով օրենքում լրացվող նոր՝ 11.1-ին հոդվածի 12-րդ մասի 3-րդ կետում վերաբերյալ բառերից հետո լրացնել «՝ եթե բուժաշխատողը մեկ տարվա ընթացքում ուղեգրման առնվազն երեք դեպքով թույլ է տվել խախտում» բառերով: Այս լրացումը նպատակ ունի հստակեցնել, թե որ դեպքում է	Ընդունվել է:	Ընդունվել է:

			համապատասխան իրավական հետևանքը առաջանալու:		
10.	***ՀՀ կառավարություն***	**Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդված**	Նախագծի 8-րդ հոդվածով օրենքի 12-րդ հոդվածով լրացվող՝ նոր 13-րդ մաս շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «13 Տեսչական մարմնին տրվում է հասանելիություն տեղեկատվական շտեմարանին այն ծավալով, որն անհրաժեշտ է սույն օրենքով սահմանված վերահսկողական գործառույթներն իրականացնելու համար:»: Առաջարկվող կարգավորման նպատակը էլեկտրոնային համակարգում Տեսչական մարմնին տրամադրվող հասանելիության ծավալը որոշակիացնելն է:	Ընդունվել է:	Ընդունվել է:
11.	***ՀՀ կառավարություն***	**Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 9-րդ հոդված**	Նախագծի 9-րդ հոդվածի վերնագիրն հանել: Այս կապակցությամբ նշենք, որ փոփոխությունը պայմանավորված է՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը՝ «*Օրենսդրական ակտի հոդվածները*	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի»:		
12.	***ՀՀ կառավարություն***	**Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 9-րդ հոդված**	Նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «անցումային անհատական լիցենզիայի մասով ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից, իսկ» բառերը: Փոփոխությունը պայմանավորված է՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ անցումային անհատական լիցենզիա ունեցող անձը չի կարող ինքնուրույն նման գործառույթ իրականացնել:	Ընդունվել է:	Ընդունվել է:
13.	***ՀՀ կառավարություն***	**Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» բառերը փոխարինել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության» բառերով: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «*Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են*	Ընդունվել է:	Ընդունվել է:

			օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը և «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն:» պահանջով:		